ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ՄԿ/226-2019

ք. Արտաշատ

„09„ 10 2019թ.

ՎԻՐԱԲ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով և 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով, 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 04-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված աուդիտի արդյունքում կազմված հաշվետվությունը, պարզելով, որ «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիրաբ Հայրիկի Հովհաննիսյանը իր մեղքով աշխատանքային պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, մասնավորապես՝ «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիրաբ Հայրիկի Հովհաննիսյանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 04-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված աուդիտի արդյունքում կազմված հաշվետվության «Բացահայտումներ և եզրակացություններ» բաժնի «Կազմակերպության ծախսերի ուսումնասիրում», «Գնումների գործընթացի ուսումնասիրում» ենթաբաժիններում, «Հաշվապահական հաշվառման վարման ուսումնասիրում» ենթաբաժնում, բացառությամբ այդ ենթաբաժնի 7-րդ և 8-րդ կետերում նշված խախտումների, «Գործավարության ուսումնասիրում» բաժնում նշված խախտումները, ինչով խախտվել են նաև «Պետական ոչ

առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի, «Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48-րդ կետի 16-րդ, 20-21-րդ ենթակետերի պահանջները՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

«Հովտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վիրաբ Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 **Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**